ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

08.04.2025թ.

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊԱՐՈՆ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սիմոնյան

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածով և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 65-րդ և 67-րդ հոդվածներով, օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ ենք ներկայացնում «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն՝ սույն գրությանը կցվում են.

1. օրենքի նախագիծը,

2. օրենքի նախագծի ընդունման հիմնավորումը,

3. գործող օրենքի փոփոխվող հոդվածների վերաբերյալ տեղեկանքը:

Նախագծի հիմնական զեկուցող՝ ՀՀ ԱԺ պատգամավոր Բաբկեն Թունյան

Խնդրում եմ օրենքի նախագծի փաթեթը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԲԱԲԿԵՆ ԹՈՒՆՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 53-րդ հոդվածի՝

1) 6-րդ մասը «ուշ ներկայացնելու» բառերից հետո լրացնել «կամ հարկը (վճարը) ուշ վճարելու» բառերով, իսկ «հաշվարկի ներկայացման» բառերից հետո լրացնել «կամ հարկի (վճարի) վճարման» բառերով.

2) 6-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Այն ֆիզիկական անձը, որը մինչև եկամտային հարկի տարեկան հաշվարկների (հայտարարագրերի) ներկայացման՝ Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետը դիմել է Հայաստանի Հանրապետության նույնականացման քարտ ստանալու համար, սակայն մինչև նշյալ վերջնաժամկետը չի ստացել նույնականացման քարտը, եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) ներկայացնում է կամ եկամտային հարկը վճարում է մինչև նույնականացման քարտը ստանալու ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:»:

**Հոդված 2.** Օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

**Հոդված 3.** Օրենսգրքի 156-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետում և 4.1-ին մասում «մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա մայիսի 1-ը» բառերը փոխարինել «յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա մարտի 2-ից մինչև հուլիսի 1-ը (2024 և 2025 թվականների հաշվետու տարիների համար համապատասխանաբար՝ 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի նոյեմբերի 1-ը և 2026 թվականի մարտի 2-ից մինչև 2026 թվականի նոյեմբերի 1-ը)» բառերով:

**Հոդված 4.** Օրենսգրքի 158-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում «մայիսի 1-ը» բառերը փոխարինել «մինչև հուլիսի 1-ը (2024 և 2025 թվականների հաշվետու տարիների համար համապատասխանաբար՝ մինչև 2025 թվականի նոյեմբերի 1-ը և 2026 թվականի նոյեմբերի 1-ը)» բառերով:

**Հոդված 5.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 53. Հարկային հաշվարկի ներկայացումը**

1. Հարկ վճարողը (Օրենսգրքով սահմանված դեպքերում՝ հարկային գործակալը, հավատարմագրային կառավարիչը, համատեղ գործունեության հաշվետու մասնակիցը, կոմիսիոները, գործարքի իրականացման ժամանակ իր անունից հանդես եկող գործակալը, անչափահաս ֆիզիկական անձանց դեպքում՝ նաև ծնողը կամ խնամակալը կամ հոգաբարձուն) հարկային հաշվարկները հարկային մարմին է ներկայացնում հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո՝ Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված ժամկետներում, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված դեպքերի:

2. Մինչև հաշվետու ժամանակաշրջանը ավարտվելը տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացված հարկային հաշվարկները համարվում են չներկայացված, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված դեպքերի:

3. Հարկային հաշվարկը կարող է ներկայացվել մինչև հաշվետու ժամանակաշրջանը ավարտվելը, եթե՝

1) կազմակերպությունը գտնվում է լուծարման գործընթացում (կազմակերպության առանձնացված ստորաբաժանումը կամ հիմնարկը գտնվում է պետական հաշվառումից հանման գործընթացում).

2) անհատ ձեռնարկատերը պետական հաշվառումից հանվում է.

3) նոտարը պաշտոնից ազատվում է:

4. ***(մասն ուժը կորցրել է 25.06.19 ՀՕ-68-Ն)***

5. Հարկային հաշվարկները հարկային մարմին են ներկայացվում էլեկտրոնային եղանակով, բացառությամբ՝

1) այն հարկային հաշվարկների, որոնցում պարունակվում է գաղտնիք համարվող և (կամ) սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն: Սույն կետում նշված հարկային հաշվարկները կարող են հարկային մարմին ներկայացվել նաև թղթային եղանակով.

2) Օրենսգրքով սահմանված կամ Կառավարության սահմանած դեպքերի, երբ հարկային հաշվարկները կարող են հարկային մարմին ներկայացվել նաև թղթային եղանակով:

6. Եթե հարկային հաշվարկի էլեկտրոնային տարբերակը մինչև համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը տեղադրված չէ հարկային մարմնի կայքում, ապա հարկային հաշվարկն ուշ ներկայացնելու կամ հարկը (վճարը) ուշ վճարելու համար Օրենսգրքով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառության առումով, համապատասխան հարկային հաշվարկի ներկայացման կամ հարկի (վճարի) վճարման համար Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետը հետաձգվում է համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվանից մինչև հարկային հաշվարկի էլեկտրոնային տարբերակը հարկային մարմնի կայքում տեղադրվելու օրը ներառված օրերի չափով:

Այն ֆիզիկական անձը, որը մինչև եկամտային հարկի տարեկան հաշվարկների (հայտարարագրերի) ներկայացման՝ Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետը դիմել է Հայաստանի Հանրապետության նույնականացման քարտ ստանալու համար, սակայն մինչև նշյալ վերջնաժամկետը չի ստացել նույնականացման քարտը, եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) ներկայացնում է կամ եկամտային հարկը վճարում է մինչև նույնականացման քարտը ստանալու ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

**Հոդված 134. Շահութահարկի հաշվարկների ներկայացումը**

1. Ռեզիդենտ շահութահարկ վճարողները, Հայաստանի Հանրապետությունում հաշվառված, կանոնները գրանցած պայմանագրային ներդրումային ֆոնդերը (բացառությամբ կենսաթոշակային ֆոնդերի և երաշխիքային ֆոնդերի), ինչպես նաև մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողները մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում շահութահարկի հաշվարկ: Մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի կողմից հարկային մարմին ներկայացվող՝ սույն մասով սահմանված շահութահարկի հաշվարկում ներառվում է նաև մշտական հաստատությանը չվերագրվող եկամուտների գծով ձևավորվող հարկման բազան և Օրենսգրքի 130-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով հաշվարկվող շահութահարկի գումարը:

2. Հարկային գործակալները մինչև յուրաքանչյուր հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով

հարկային մարմին են ներկայացնում նախորդ հաշվետու եռամսյակում ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներին վճարված եկամուտների, այդ եկամուտներից հաշվարկված, պահված և պետական բյուջե վճարված շահութահարկի գումարների մասին հաշվարկ:

3. Հարկային գործակալի բացակայության դեպքում առանց մշտական հաստատության Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողները մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմնի՝ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանն սպասարկող ստորաբաժանում են ներկայացնում շահութահարկի հաշվարկներ:

4. ~~Հարկային գործակալները մինչև յուրաքանչյուր հարկային տարվան հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում նախորդ հարկային տարվա ընթացքում այլ պետություններում գրանցված կազմակերպություններին վճարված եկամուտների, եկամուտների վճարման ամսաթվի, այդ եկամուտներից հաշվարկված և պահված շահութահարկի վերաբերյալ տեղեկություններ: Սույն մասով սահմանված տեղեկությունները հարկային մարմին են ներկայացվում Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի կողմ հանդիսացող պետություններում գրանցված կազմակերպությունների մասով՝ տեղեկությունների փոխանակման պահանջ սահմանված լինելու դեպքում: Սույն մասում նշված՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի ցանկը հրապարակում է հարկային մարմինը՝ այն տեղադրելով իր պաշտոնական ինտերնետային կայքում:~~

Formatted: Strikethrough

**Հոդված 156. Եկամտային հարկի հաշվարկները և այլ փաստաթղթերը ներկայացնելը**

1. Հարկային գործակալները մինչև յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում եկամտային հարկի հաշվարկ, որտեղ ներառվում են տվյալ հարկային գործակալից եկամուտներ ստացող ֆիզիկական անձանց (բացառությամբ միայն պասիվ եկամուտներ ստացող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) չունեցող օտարերկրյա քաղաքացիների ու քաղաքացիություն չունեցող ֆիզիկական անձանց) եկամուտների, այդ եկամուտներից հաշվարկված և պահված եկամտային հարկի, իսկ սոցիալական վճարներ կատարող ֆիզիկական անձանց մասով՝ նաև հաշվարկված և պահված սոցիալական վճարների վերաբերյալ անհատական տեղեկություններ, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի: Եկամտային հարկի հաշվարկում ներառվում են նաև տվյալ հարկային գործակալից հաշվետու ժամանակաշրջանի

ընթացքում բացառապես պասիվ եկամուտներ ստացող ֆիզիկական անձանց պասիվ եկամուտների և Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) չունեցող օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող ֆիզիկական անձի եկամուտների, ինչպես նաև այդ եկամուտներից հաշվարկված և պահված եկամտային հարկի գումարների վերաբերյալ ամփոփ տվյալներ:

2. Հարկային գործակալները նոր աշխատողին (բացառությամբ Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) չունեցող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող ֆիզիկական անձանց) աշխատանքի ընդունելուց հետո, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ աշխատողի կողմից աշխատանքը փաստացի սկսելու օրվան նախորդող օրվա ավարտը, իսկ աշխատանքի ընդունելու օրն աշխատանքը փաստացի սկսելու դեպքում՝ մինչև աշխատանքի ընդունելու օրվա ժամը 14:00-ն, Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում նոր աշխատողի գրանցման հայտ, որտեղ ներառվում են անհատական տեղեկություններ (անունը, ազգանունը, հայրանունը, բնակության (հաշվառման) վայրը, հանրային ծառայությունների համարանիշը (սոցիալական քարտի համարը), ինչպես նաև օրենքով սահմանված այլ տեղեկություններ), բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի:

2.1. Հարկային գործակալները, սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգավորումներին համապատասխան, հարկային մարմին են ներկայացնում Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով ներգրավված փորձնակի և մասնագիտական ուսուցում անցնող աշակերտի գրանցման հայտ, որտեղ ներառվում են օրենքով սահմանված տեղեկություններ:

3. Եթե նոր աշխատողի համար գրանցման հայտում և (կամ) եկամտային հարկի հաշվարկում ներառվելիք՝ անձին վերաբերող տեղեկատվությունը օրենսդրությամբ սահմանված է որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն, ապա տվյալ անձի համար գրանցման հայտը և (կամ) եկամտային հարկի հաշվարկը հարկային մարմին է ներկայացվում Կառավարության սահմանած կարգով:

3.1. Եկամտային հարկի տարեկան հաշվարկում (հայտարարագրում) օրենսդրությամբ սահմանված՝ որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվությունը չի լրացվում:

4. Ֆիզիկական անձինք (անչափահաս ֆիզիկական անձանց դեպքում՝ ծնողը կամ խնամակալը կամ հոգաբարձուն)՝

1) մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում Օրենսգրքի 151-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված եկամուտների մասով եկամտային հարկի պարզեցված հաշվարկներ.

2) ~~մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա մայիսի 1-ը~~ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող

Formatted: Strikethrough
Formatted: Underline

հարկային տարվա մարտի 2-ից մինչև հուլիսի 1-ը (2024 և 2025 թվականների հաշվետու տարիների համար համապատասխանաբար՝ 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի նոյեմբերի 1-ը և 2026 թվականի մարտի 2-ից մինչև 2026 թվականի նոյեմբերի 1-ը) ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում Օրենսգրքի 151-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված եկամուտների մասով եկամտային հարկի տարեկան հաշվարկներ (հայտարարագրեր):

Formatted: English (United States)

4.1. Սույն հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված կարգով եկամտային հարկի տարեկան հաշվարկներ (հայտարարագրեր) չներկայացնող՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները (բացառությամբ հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ անչափահաս համարվող ֆիզիկական անձանց) ~~մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա մայիսի 1-ը~~ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա մարտի 2-ից մինչև հուլիսի 1-ը (2024 և 2025 թվականների հաշվետու տարիների համար համապատասխանաբար՝ 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի նոյեմբերի 1-ը և 2026 թվականի մարտի 2-ից մինչև 2026 թվականի նոյեմբերի 1-ը) ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում եկամտային հարկի տարեկան հաշվարկներ (հայտարարագրեր):

Formatted: Strikethrough

Formatted: English (United States)

Formatted: No underline

## Գ Լ ՈՒ Խ 29

## *ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԵՎ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՇՎԻՆ ՄՈՒՏՔԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ*

### Հոդված 158. Եկամտային հարկի գումարի վճարումը և սոցիալական ծախսերի փոխհատուցումը (վերադարձը)

*(վերնագիրը լրաց. 23.12.22 ՀՕ-593-Ն)*

1. Հարկային գործակալները Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հաշվարկված՝ պետական բյուջե վճարման ենթակա եկամտային հարկի գումարները պետական բյուջե են վճարում մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

2. Ֆիզիկական անձինք (անչափահաս ֆիզիկական անձանց դեպքում՝ ծնողը կամ խնամակալը կամ հոգաբարձուն) Օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով հաշվարկված՝ պետական բյուջե վճարման ենթակա եկամտային հարկի գումարները պետական բյուջե են վճարում՝

1) Օրենսգրքի 151-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքում՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ.

2) Օրենսգրքի 151-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքում՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա ~~մայիսի 1-ը~~ մինչև հուլիսի 1-ը (2024 և 2025 թվականների հաշվետու տարիների համար համապատասխանաբար՝ մինչև 2025 թվականի նոյեմբերի 1-ը և 2026 թվականի նոյեմբերի 1-ը) ներառյալ:

## Հիմնավորում

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը).** Նախագծի նպատակը Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական անձանց եկամուտների համընդհանուր հայտարարագրման համակարգի շրջանակներում եկամտային հարկի տարեկան հաշվարկների (հայտարարագրերի) ներկայացման վերջնաժամկետների վերանայումն է:

**2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.** Ներկայումս ՀՀ հարկային օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք) սահմանված կարգավորումների համաձայն՝ եկամտային հարկի տարեկան հաշվարկները (հայտարարագրերը) հարկային մարմին ներկայացնելու և եկամտային հարկի գումարը վճարելու վերջնաժամկետ է սահմանված յուրաքանչյուր հաշվետու տարվան հաջորդող տարվա մայիսի 1-ը ներառյալ:

Խնդիրն այն է, որ 2024 թվականի հաշվետու տարվա համար հայտարարատու համարվող ֆիզիկական անձանց շրջանակը էականորեն ընդլայնվել է, ինչի հետևանքով որոշակիորեն երկարաձգվել են ֆիզիկական անձանց նույնականացման քարտերի տրամադրման գործընթացները: Վերոգրյալով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել վերանայել 2024 և 2025 թվականների հաշվետու տարիների համար հայտարարագիրը ներկայացնելու վերջնաժամկետը: Միաժամանակ, հայտարարագրերի ինքնաշխատ եղանակով լրացումը լիարժեք ապահովելու և հարկային գործակալներից ստացվող տեղեկությունները լիարժեք մշակելու առումով անհրաժեշտություն է առաջացել վերանայել նաև հայտարարագրերի ներկայացման ժամկետի սկիզբը:

**3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.** Նախագծով առաջարկում է վերանայել ֆիզիկական անձանց եկամուտների հայտարարագրման՝ գործող օրենսդրությամբ սահմանված ժամկետները: Մասնավորապես, առաջարկվում է սահմանել, որ՝

1) այն ֆիզիկական անձը, որը մինչև եկամտային հարկի տարեկան հաշվարկների (հայտարարագրերի) ներկայացման՝ Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետը դիմել է Հայաստանի

Հանրապետության նույնականացման քարտ ստանալու համար, սակայն մինչև նշյալ վերջնաժամկետը չի ստացել նույնականացման քարտը, եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) ներկայացնում է կամ եկամտային հարկը վճարում է մինչև նույնականացման քարտը ստանալու ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ,

2) եկամտային հարկի տարեկան հաշվարկներ (հայտարարագրեր) ներկայացնելու ժամկետը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա մարտի 2-ից մինչև հուլիսի 1-ն է (2024 և 2025 թվականների հաշվետու տարիների համար համապատասխանաբար՝ 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի նոյեմբերի 1-ը և 2026 թվականի մարտի 2-ից մինչև 2026 թվականի նոյեմբերի 1-ը),

3) եկամտային հարկի գումարների վճարման վերջնաժամկետը մայիսի 1-ի փոխարեն հուլիսի 1-ն է (2024 և 2025 թվականների հաշվետու տարիների համար համապատասխանաբար՝ մինչև 2025 թվականի նոյեմբերի 1-ը և 2026 թվականի նոյեմբերի 1-ը):

**4. Կարգավորման առարկան.** Նախագծի կարգավորման առարկան եկամտային հարկի տարեկան հաշվարկների (հայտարարագրերի) ներկայացման ժամկետների սահմանման հետ կապված հարաբերություններն են:

**5. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը.** Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է վերանայել եկամտային հարկի տարեկան հաշվարկների (հայտարարագրերի) ներկայացման ժամկետները, ինչպես նաև վերանայել հայտարարագրերի ներկայացման հետ կապված որոշ կարգավորումներ: